ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ N 04/2024-Ա/Վ

ԶԻՆԱ ՉԱԼԻԿՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԱՆՀԱՄԱՏԵՂԵԼԻՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐՆ ԱՌԵՐԵՎՈՒՅԹ ԽԱԽՏԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 14 հունիսի, 2024 թվական

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Մարիամ Գալստյանի, Արամայիս Փաշինյանի և Լիլիթ Ալեքսանյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), քննության առնելով Զինա Չալիկյանի կողմից անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման վերաբերյալ 2024 թվականի փետրվարի 23-ին հարուցված թիվ **04/2024-Ա/Վ** վարույթի նյութերը.

պարզեց.

I. Նախապատմություն

1.1 Հանձնաժողովի կողմից 2024 թվականի փետրվարի 6-ի «Առավոտ», «Ժողովուրդ», «Ավրորա Նյուզ», փետրվարի 8-ի «Անկախ», «Լուրեր.com», փետրվարի 14-ի «Ինֆո Պրեսս.Էյ ԷՄ» լրատվամիջոցների հրապարակումների հիման վրա իրականացված ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է, որ

1) Զինա Չալիկյանը Ազգային ժողովի նախագահի ռեֆերենտի պաշտոնը ստանձնել է 2021 թվականի օգոստոսի 3-ին:

2) Զինա Չալիկյանը 2023 թվականի հոկտեմբերի 20-ից զբաղեցնում է Երևանի ավագանու անդամի պաշտոնը:

1.2 2024 թվականի փետրվարի 23-ին Հանձնաժողովը կայացրել է թիվ **04/2024-Ա/Վ** որոշումը՝ Զինա Չալիկյանի նկատմամբ անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին:

1.3 Հանձնաժողովի կողմից 2024 թվականի փետրվարի 28-ին թիվ 01/660-2024 գրությամբ անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին որոշումը փոստային ծառայության միջոցով ուղարկվել է Զինա Չալիկյանին՝ միաժամանակ պահանջելով ներկայացնել պարզաբանում վարույթի շրջանակներում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ՝ կցելով փաստարկների հիմնավորվածությունը հավաստող նյութեր: Նշված գրության՝ փոստային ծառայության կողմից փակ ծրարով «չպահանջված» նշումով վերադարձնելու հանգամանքով պայմանավորված՝ այն 2024 թվականի ապրիլի 11-ին Ազգային ժողովի աշխատակազմին ուղղված թիվ 01/1181-2024 գրությամբ վարույթի մասնակցին է փոխանցվել 2024 թվականի ապրիլի 16-ին:

1.4 Վարույթի շրջանակներում զբաղեցրած պաշտոն(ներ)ի, ինչպես նաև համապատասխան պաշտոն(ներ)ում ստացված աշխատանքի վարձատրության միջոցների վերաբերյալ տեղեկատվություն հայցելու նպատակով Հանձնաժողովի կողմից 2024 թվականի ապրիլի 3-ին թիվ 01/1020-2024 գրությամբ հարցում է կատարվել Պետական եկամուտների կոմիտեին, որին ի պատասխան՝ 2024 թվականի ապրիլի 11-ի թիվ 01/71-6/22328-2024 գրությամբ ստացված տեղեկատվության համաձայն՝ Զինա Չալիկյանը 2021 թվականի օգոստոսի 3-ից զբաղեցնում է Ազգային ժողովի նախագահի ռեֆերենտի պաշտոնը:

1.5 2024 թվականի ապրիլի 23-ին վարույթի մասնակցի կողմից Հանձնաժողովում մուտքագրված թիվ Մ-1873-2024 գրությամբ ներկայացվել է պարզաբանում սույն վարույթի շրջանակներում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ:

1.6 2024 թվականի փետրվարի 12-ին Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) նիստում ծավալված քննարկումների արդյունքում որոշվել էր օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալ՝ փոփոխելով ավագանու անդամների անհամատեղելիությունը սահմանող իրավական նորմերը՝ հստակ նախատեսելով անհամատեղելիության պահանջները՝ առանց տարընթերցումների

հնարավորության: Հաշվի առնելով, որ Ազգային ժողովի պաշտոնական կայքէջում հրապարակված տեղեկատվության համաձայն՝ ավագանու անդամների անհամատեղելիության պահանջներ սահմանող իրավակարգավորումներին առնչվող «Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» օրենքի և հարակից այլ օրենքների նախագծերի փաթեթը (այսուհետ՝ Նախագծերի փաթեթ) 2024 թվականի մայիսի 17-ի նիստում քննարկվել և հավանության է արժանացել Ազգային ժողովի պետահիրավական հարցերի մշտական հանձնաժողովի կողմից և ընդգրկվել է 2024 թվականի մայիսի 21-ին գումարվելիք նիստի օրակարգում, ինչպես նաև այն հանգամանքը, որ Նախագծերի փաթեթով առաջարկվող փոփոխություններն անմիջականորեն առնչվում են վերոնշյալ վարույթի առարկային և իրավական անվտանգության տեսանկյունից էական նշանակություն ունեն նշված վարույթի եզրափակման համար՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը, 2024 թվականի մայիսի 20-ին որոշում է կայացրել 30 օրով երկարաձգել վարույթի ժամկետը՝ Նախագծերի փաթեթի ընթացքի վերաբերյալ իրավասու մարմնից տեղեկատվություն հայցելու նպատակով:

1.7 Հանձնաժողովը 2024 թվականի մայիսի 20-ին թիվ 01/1643-2024 գրությամբ Նախագծերի փաթեթի՝ Ազգային ժողովի կողմից քննարկման ակնկալվող ժամկետների վերաբերյալ տեղեկատվություն է հայցել Ազգային ժողովի պետահիրավական հարցերի մշտական հանձնաժողովից, որին ի պատասխան՝ 2024 թվականի մայիսի 29-ի թիվ ԱԺՀ.1/2530-2024 գրությամբ հայտնել են, որ Նախագծերի փաթեթը 2024 թվականի մայիսի 22-ին Ազգային ժողովի կողմից ընդունվել է երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ և 2024 թվականի մայիսի 23-ին ստորագրվել է ՀՀ նախագահի կողմից:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշում ու պարզաբանումներ

2.1 Հանձնաժողովում 2024 թվականի ապրիլի 23-ին մուտքագրված Մ-1873-2024 գրությամբ Զինա Չալիկյանը ներկայացրել է պարզաբանում (այսուհետ՝ Պարզաբանում) առ այն, որ «Հանրային ծառայության մասին» օրենքով և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքով սահմանված իրավանորմերից առերևույթ հետևում է, որ Երևան քաղաքում ավագանու անդամի այլ պաշտոն զբաղեցնելու

սահմանափակումները հստակ և սպառիչ սահմանված են, թվարկված են այն բոլոր պաշտոնները և աշխատանքները, որոնք ավագանու անդամն իրավունք չունի զբաղեցնել: Այդ ցանկի մեջ չի մտնում Ազգային ժողովի ռեֆերենտի պաշտոնը: Ուստի, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի որևէ խախտում առկա չէ: Անդրադառնալով մինչև ««Հանրային ծառայության մասին» օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» 2024 թվականի մայիսի 22-ի ՀՕ-226-Ն օրենքն ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ (ուժի մեջ է մտել 2024 թվականի մայիսի 25-ին) օրենքի (այսուհետ՝ ՀՕ-226-Ն օրենք) 31-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորմանը՝ վարույթի մասնակիցը նշել է, որ նորմի դիսպոզիցիայում հստակ շարադրված է այդ կանոնի կիրառման բացառությունը, մասնավորապես՝ (բացառությամբ համայնքի ավագանու անդամների): Տվյալ դեպքում, տառացի մեկնաբանման արդյունքում ակնհայտ է, որ քննարկվող նորմի բացառությունը տառացի շարադրվել է՝ բացառությամբ համայնքի ավագանու անդամների, և դա որևէ պայմաններում չի կարող որակվել տարընկալում, քանի որ օրենքը հատուկ նորմով հստակ սահմանել է բացառությունը՝ հնարավորություն չտալով կարգավորումը սահմանել ըստ մեկնաբանությունների:

2.2 Վարույթի մասնակիցը, վկայակոչելով մինչև ՀՕ-226-Ն օրենքն ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ օրենքով և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքով՝ հանրային պաշտոնի և ավագանու անդամի պաշտոնի համար սահմանափակումներ նախատեսող իրավակարգավորումները և մեջբերելով «Mediahub.am» լրատվական կայքին Հանձնաժողովի նախագահի պարտականությունները կատարող Մարիամ Գալստյանի տված հարցազրույցից հատվածներ, որտեղ վերջինս վերահաստատում է քննարկվող խնդրի առնչությամբ Հանձնաժողովի դիրքորոշումը, նշում է, որ նշված օրենքների միջև առկա չէ հակասություն, բայց անգամ նման հակասության առկայության պարագայում՝ այն պետք է լուծվի «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 40-րդ հոդվածով սահմանված կարգով. նորմատիվ իրավական ակտերի միջև կոլիզիաների դեպքում, ըստ հերթականության, յուրաքանչյուր հաջորդ կանոնի կիրառման կանոնին համապատասխան՝ յուրաքանչյուր հաջորդ կանոնը կիրառվում է, եթե կիրառելի չէ նախորդ կանոնը: Մասնավորապես՝ վկայակոչված հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ կիրառվում են ավելի ուշ ուժի մեջ մտած նորմատիվ իրավական ակտի

նորմերը, իսկ 4-րդ կետի համաձայն՝ կիրառվում է ֆիզիկական և իրավաբանական անձանց համար բարենպաստ նորմատիվ իրավական ակտի նորմը, եթե այդ նորմի կիրառմամբ չեն շոշափվում այլ անձանց իրավունքները կամ օրինական շահերը: Վերոնշյալից ելնելով՝ վարույթի մասնակիցը նշում է, որ մինչև ՀՕ-226-Ն օրենքն ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորումը կիրառելի է: Անդրադառնալով Հանձնաժողովի կողմից հարուցած որոշման ներածական մասին՝ վարույթի մասնակիցը հավելել է, որ ներածական մասում որպես ուսումնասիրության առարկա նշված են փետրվարի 6-ի (...) լրատվամիջոցների հրապարակումները, սակայն ակնհայտ է (մեջբերված հրապարակման և Հանձնաժողովի նախագահի պարտականությունները կատարող Մարիամ Գալստյանի կողմից արված մեկնաբանությունների հիման վրա), որ դեռևս 2024 թվականի հունվարի 30-ին Հանձնաժողովը տեղյակ է եղել հրապարակումների վերաբերյալ, մինչդեռ, որոշման մեջ նշված է լրատվամիջոցների կողմից ավելի ուշ արված հրապարակումների ուսումնասիրությունների արդյունքում պարզված լինելու հանգամանքը:

Միաժամանակ, վարույթի մասնակիցը մեջբերել է նաև Խորհրդի նիստի մամլո հաղորդագրությունը, համաձայն որի՝

«Ծավալված քննարկումների արդյունքում Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի անդամներն եկել են մեկ ընդհանուր դիրքորոշման, որ անհրաժեշտ է ընդունել օրենք, հստակ սահմանելով անհամատեղելիության կանոններն առանց տարընթերցումների հնարավորությունների՝ սահմանելով, որ այս պահին այն ավագանու անդամներին, ովքեր անհամատեղելիության իրավիճակում են հայտնվել, պայմանականորեն ասած, համաներում է տրվում, հաջորդ պահից տեղի ունեցող բոլոր ընտրությունները տեղի կունենան՝ բացարձակ արգելք սահմանելով հանրային և պետական ծառայողների և հանրային պաշտոն զբաղեցնողների համար:»

Հիմք ընդունելով վերոնշյալ փաստարկները, իրավական նորմերը, մեկնաբանությունները և պատճառաբանությունները՝ վարույթի մասնակիցը գտնում է, որ անհամատեղելիության պահանջների խախտման հիմքով վարույթ հարուցելու հիմքերը բացակայում են և այն ենթակա է կարճման:

III. Վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստեր

3.1 Զինա Զալիկյանը Ազգային ժողովի նախագահի ռեֆերենտի պաշտոնը ստանձնել է 2021 թվականի օգոստոսի 3-ին և շարունակում է պաշտոնավարել մինչ օրս:

3.2 Զինա Զալիկյանը 2023 թվականի հոկտեմբերի 20-ից զբաղեցնում է Երևանի ավագանու անդամի պաշտոնը:

3.3 2024 թվականի մայիսի 25-ին ուժի մեջ է մտել ՀՕ-226-Ն օրենքը, որով փոփոխության են ենթարկվել ավագանու անդամի՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ կիրառելի իրավակարգավորումները՝ սահմանելով հանրային պաշտոնը կամ հանրային ծառայության պաշտոնը ավագանու անդամի պաշտոնի հետ զբաղեցնելու անհամատեղելիությունը, միաժամանակ, բացառություն նախատեսելով այն անձանց համար, ովքեր մինչև ՀՕ-226-Ն օրենքն ուժի մեջ մտնելը համատեղել են վերոնշյալ պաշտոնները:

IV. Անհամատեղելիության պահանջին առաջադրվող օրենսդրական կարգավորումներ

4.1 ՀՕ-226-Ն օրենքի 1-ին հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները չեն կարող զբաղեցնել իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ սույն հոդվածով սահմանված անհամատեղելիության պահանջները չեն տարածվում համայնքի ավագանու անդամների վրա, որոնց նկատմամբ սահմանափակումները սահմանվում են «Տեղական ինքնակառավարման մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքներով:

Նույն օրենքի անցումային դրույթների համաձայն՝ սույն օրենքի գործողությունը չի տարածվում այն անձանց վրա, որոնք մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը հանրային

պաշտոնը կամ հանրային ծառայության պաշտոնը համատեղել են համայնքի ավագանու անդամի պաշտոնի հետ: Այդ անձինք կարող են շարունակել համատեղ պաշտոնավարումը մինչև տվյալ նորընտիր ավագանու առաջին նիստի գումարման օրը:

4.2 «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 31-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները պաշտոնում նշանակվելուց (ընտրվելուց) հետո՝ մեկ ամսվա ընթացքում, պարտավոր են ապահովել սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջների կատարումը:

4.3 «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգավորումների համաձայն՝ ավագանու անդամը չի կարող միաժամանակ՝ աշխատել քաղաքապետարանի կամ որևէ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմում, լինել Երևանի ենթակայության կազմակերպությունների ղեկավար, լինել վարչական շրջանի ղեկավար, աշխատել ոստիկանությունում, ազգային անվտանգության ծառայությունում, լինել դատավոր, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի անդամ, զինծառայող, դատական ծառայող, դատախազության մարմիններում ծառայող:

Նույն օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգավորումների համաձայն՝ ավագանին ընտրվում է հինգ տարի ժամկետով: Նորընտիր ավագանու լիազորությունների ժամկետը սկսվում է **առաջին նիստի գումարման պահից**: Այդ պահից **ավարտվում է նախորդ ավագանու լիազորությունների ժամկետը**:

4.4 Օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ***հանրային պաշտոնը*** դասակարգվում է խմբերի՝ պետական և ***համայնքային:*** Նույն հոդվածի համաձայն՝ համայնքային պաշտոնները դասակարգվում են տեսակների՝ ***քաղաքական,*** վարչական և հայեցողական:

Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***համայնքային քաղաքական պաշտոններն են*** համայնքների ղեկավարների և նրանց տեղակալների, ***համայնքի ավագանու անդամի*** պաշտոնները:

Ազգային ժողովի նախագահի ռեֆերենտի պաշտոնը համաձայն՝ Օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասի, **պետական հայեցողական** պաշտոն է և նույն օրենքի իմաստով հանդիսանում է **հանրային պաշտոն**:

V. Հանձնաժողովի պատճառաբանություններն ու եզրահանգումը

Անհամատեղելիության պահանջներ սահմանող օրենսդրական կարգավորումների վերլուծությունից հետևում է, որ **Ազգային ժողովի նախագահի ռեֆերենտի**՝ պետական հայեցողական պաշտոնը հանդիսանում է ***հանրային պաշտոն***, որի նկատմամբ կիրառելի են Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված անհամատեղելիության պահանջները:

Միաժամանակ, Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ համայնքի ավագանու անդամի պաշտոնը **համայնքային քաղաքական** պաշտոն է, ուստի Օրենքի իմաստով՝ **Ազգային ժողովի նախագահի ռեֆերենտի** պաշտոնը զբաղեցնող անձի համար այն չի դիտարկվում ***իբրև իր կարգավիճակով պայմանավորված այլ պաշտոն:***

Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ **հանրային պաշտոն զբաղեցնող անձինք** և հանրային ծառայողները **պաշտոնում նշանակվելուց** (ընտրվելուց) հետո՝ մեկ ամսվա ընթացքում, պարտավոր են ապահովել սույն հոդվածի ***1-ին մասով սահմանված պահանջների կատարումը***:

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ Զինա Չալիկյանը **Ազգային ժողովի նախագահի ռեֆերենտի** պաշտոնի հետ միաժամանակ զբաղեցրել է իր կարգավիճակով չպայմանավորված պաշտոն տեղական ինքնակառավարման մարմնում՝ հանդիսանալով Երևանի ավագանու անդամ:

Մինչև ՀՕ-226-Ն օրենքն ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ (սույն վարույթի հարուցման պահին գործող) 31-րդ հոդվածի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք (բացառությամբ համայնքի ավագանու անդամների) և հանրային ծառայողները չեն կարող զբաղեցնել իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից: Համայնքի ավագանու անդամների այլ պաշտոններ զբաղեցնելու սահմանափակումները նկարագրված են «Տեղական ինքնակառավարման մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքներում:

Սույն վարույթի շրջանակներում պարզված փաստական հանգամանքների և վերոնշյալ իրավական նորմերի պահանջների վերլուծության համադրմամբ՝ Հանձնաժողովն ***արձանագրում է.***

Զինա Չալիկյանը **Ազգային ժողովի նախագահի ռեֆերենտի** պաշտոնի հետ միաժամանակ զբաղեցրել է իր կարգավիճակով չպայմանավորված պաշտոն տեղական ինքնակառավարման մարմնում՝ հանդիսանալով Երևանի ավագանու անդամ:

Հանձնաժողովը, վերլուծելով սույն վարույթի շրջանակներում քննարկվող իրավական նորմերի պահանջները, միաժամանակ, անդրադառնալով վարույթի մասնակցի կողմից ներկայացված դիրքորոշմանը, էական է համարում և վերոնշյալ փաստերը գնահատման առարկա է դարձնում նաև այն հանգամանքի համակցությամբ, որ հանրային (հանրային ծառայության) պաշտոնների և ավագանու անդամի պաշտոնի համատեղելիությունն անհրաժեշտ է բացահայտել ոչ միայն ավագանու անդամի նկատմամբ կիրառվող սահմանափակումների, ***այլ հանրային (հանրային ծառայության) պաշտոններին*** ներկայացվող պահանջների համատեքստում, ըստ որի վերջիններիս՝ պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն զբաղեցնելու արգելքը բացարձակ բնույթ է կրում:

Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների նկատմամբ անհամատեղելիության պահանջներ սահմանող օրենսդրական դրույթով ուղղակիորեն ամրագրված է իր կարգավիճակով չպայմանավորված այլ պաշտոն զբաղեցնելու արգելքը: Նշված դրույթի բովանդակությունից հետևում է, որ պաշտոնատար անձը, պաշտոնավարման ընթացքում որևէ ժամանակահատվածում միաժամանակ զբաղեցնելով իր կարգավիճակով չպայմանավորված այլ պաշտոն՝ կոնկրետ ժամանակահատվածում արդեն իսկ թույլ է տալիս անհամատեղելիության պահանջների խախտում:

Վերոնշյալի հաշվառմամբ՝ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում վերհանել մինչև ՀՕ-226-Ն օրենքն ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ պաշտոնի անհամատեղելիության բովանդակային սահմանները: Այսպես, **հանրային պաշտոն զբաղեցնող անձինք** (բացառությամբ համայնքի ավագանու անդամների) և հանրային ծառայողները **չեն կարող զբաղեցնել իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն** պետական կամ **տեղական**

ինքնակառավարման այլ մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից: Համայնքի ավագանու անդամների այլ պաշտոններ զբաղեցնելու սահմանափակումները նկարագրված են «Տեղական ինքնակառավարման մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքներում: Նշված դրույթից հետևում է, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողներին ներկայացվող օրենսդրական պահանջներն ընդգրկում են երեք բաղադրիչներ, այն է՝ այլ պաշտոն զբաղեցնելու, ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու, այլ վճարովի աշխատանք կատարելու արգելքները, որոնցից յուրաքանչյուրին առնչվող իրավակարգավորումները սահմանված են «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի առանձին դրույթներում:

Վերոնշյալից հետևում է, որ սույն վարույթի հարուցման պահին գործող օրենսդրությամբ հանրային պաշտոն զբաղեցնող անձին արգելվում էր զբաղեցնել այլ պաշտոն (կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում) կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

Անդրադառնալով վարույթի մասնակցի կողմից Պարզաբանմամբ նշված այն դիտարկմանն առ այն, որ իր նկատմամբ անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման վերաբերյալ վարույթի հարուցման որոշման ներածական մասում նշված է լրատվամիջոցների կողմից ավելի ուշ արված հրապարակումների ուսումնասիրությունների արդյունքում առերևույթ խախտման պարզման հանգամանքը, Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում ընդգծել այն իրողությունը, որ նշված հարզազրույցի ընթացքում ներկայացվել է Հանձնաժողովի դիրքորոշումը, և վարույթի մասնակցի կողմից ներկայացված դիտարկումը, սույն պարագայում, վերաբերելի չէ: Միաժամանակ, Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում ընդգծել նաև այն հանգամանքը, որ վերոնշյալի առնչությամբ վարույթի մասնակցի կողմից մատնանշված ժամանակահատվածում տարբեր լրատվամիջոցներում տարբեր ամսաթվերի դրությամբ հրապարակվել են նույնաբովանդակ հրապարակումներ: Հանձնաժողովը օրենքով սահմանված իր լիազորությունների շրջանակներում իրականացրել է

լրատվամիջոցներում ներկայացված հրապարակումների ուսումնասիրություններ և իր կողմից անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման հիմքով հարուցվող վարույթի որոշմամբ անդրադարձել է բազմաթիվ հրապարակումներից մի քանիսին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ««Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2022 թվականի հունիսի 9-ի ՀՕ-268-Ն (ուժի մեջ մտած 01.07.2022թ.-ին) օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասում ավագանու անդամի համար բացառության սահմանումը առաջացրել է որոշակի տարընկալում պաշտոնների համատեղելիության տեսանկյունից, ինչպես նաև Խորհրդի անդամների կողմից առանց տարընթերցումների հնարավորությունների օրենք ընդունելու անհրաժեշտության առնչությամբ ծավալված քննարկումների շրջանակներում ձևավորված ընդհանուր դիրքորոշումը՝ օրենսդիրը 2024 թվականի մայիսի 25-ին ուժի մեջ մտած ՀՕ-226-Ն օրենքի 31-րդ հոդվածի նոր խմբագրությամբ հստակ սահմանել է հանրային պաշտոնը կամ հանրային ծառայության պաշտոնը համայնքի ավագանու անդամի պաշտոնի հետ համատեղ զբաղեցնելու արգելքը: Միաժամանակ, նույն օրենքի անցումային դրույթներով բացառություն նախատեսելով բոլոր այն անձանց համար, ովքեր մինչև օրենքն ուժի մեջ մտնելն արդեն իսկ հանրային պաշտոնը կամ հանրային ծառայության պաշտոնը համատեղել են համայնքի ավագանու անդամի պաշտոնի հետ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետով սահմանված իրավակարգավորման համաձայն՝ ***վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթը*** կարող է կարճվել, եթե՝ օրենքի կամ իրավական այլ ակտի պահանջների խախտումների կամ դրանց կանխման հետ չկապված հարցով իրավիճակի փոփոխման կամ օրենքով նախատեսված այլ հիմքով վերացել է վարչական ակտի ընդունման անհրաժեշտությունը:

Վերոնշյալ դրույթով սահմանված կարգով վարույթի կարճման հիմքերի կիրառելիության հարցը գնահատելիս՝ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում անդադառնալ հետևյալ իրավակարգավորումներին:

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված են անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների և շահերի բախման վերաբերյալ վարույթների հարուցման հիմքերը, որոնց շրջանակում ամրագրված է հետևյալը.

Վարույթ կարող է հարուցվել՝

(...)

2) լրատվամիջոցների հրապարակումների հիման վրա:

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը պետական պաշտոն զբաղեցնող անձանց (...) «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված *անհամատեղելիության պահանջների (...) առերևույթ դեպքերի առկայության պարագայում հարուցում է համապատասխան վարույթ*:

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավանորմի համաձայն՝ անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման կապակցությամբ հարուցված վարութը պետք է եզրափակվի Հանձնաժողովի կողմից եզրակացության ընդունմամբ՝ *պաշտոն զբաղեցնող անձի կողմից* (...) անհամատեղելիության պահանջների *խախտման առկայության կամ բացակայության մասին*:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ պաշտոն զբաղեցնող անձի կողմից անհամատեղելիության պահանջների խախտման մասին եզրակացությունը և այդ առնչությամբ վարույթի բոլոր փաստաթղթերը, նյութերը եզրակացությունն ընդունելու պահից եռօրյա ժամկետում ուղարկվում են **պաշտոն զբաղեցնող անձի կողմից անհամատեղելիության պահանջների խախտման հիմքով** նրա լիազորությունները դադարեցնելու հարցը քննարկելու (քննելու) իրավասություն ունեցող մարմիններ:

Վերոնշյալ իրավական նորմերի բովանդակությունից հետևում է, որ **անհամատեղելիության պահանջների** առերևույթ խախտման հիմքով հարուցվող վարույթում վարչական մարմինը պարտավոր է գործով բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումն իրականացնել **հանրային պաշտոն զբաղեցնող անձի կողմից օրենքով սահմանված պահանջների առերևույթ խախտման** հաստատման կամ հերքման համար անհրաժեշտ պարզման ենթակա հանգամանքների կապակցությամբ, արդյունքում լուծել հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործը՝ հաստատելով հանրային պաշտոն զբաղեցնող անձի կողմից *խախտման առկայության կամ բացակայության փաստը*:

Այսպես, ՀՕ-226-Ն օրենքի անցումային դրույթների համաձայն՝ սույն օրենքի գործողությունը չի տարածվում այն անձանց վրա, որոնք մինչև սույն օրենքն ուժի մեջ

մտնելը հանրային պաշտոնը կամ հանրային ծառայության պաշտոնը համատեղել են համայնքի ավագանու անդամի պաշտոնի հետ: Այդ անձինք կարող են շարունակել համատեղ պաշտոնավարումը մինչև տվյալ նորընտիր ավագանու առաջին նիստի գումարման օրը:

Վերոնշյալ դրույթներից հետևում է, որ սահմանվել է միջանկյալ կարգավորում բոլոր այն անձանց համար, ովքեր անհամատեղելի համարվող պաշտոնի ստանձման պահին գործող կարգավորումներով նախատեսված արգելքի առկայության պարագայում՝ մինչև նոր կարգավորումների ուժի մեջ մտնելը, այնուամենայնիվ, համատեղել են օրենքի իմաստով անհամատեղելի պաշտոնները: Վկայակոչված կարգավորմամբ անհամատեղելիության իրավիճակում հայտնված այդ անձանց հնարավորություն է ընձեռվել շարունակել քննարկման առարկա հանդիսացող պաշտոնների համատեղ պաշտոնավարումը մինչև նորընտիր ավագանու առաջին նիստի գումարման օրը: Այսպիսով, ըստ գործում առկա փաստական տվյալների՝ նշված փոփոխությամբ նախկինում գործող կարգավորումներով սահմանված անհամատեղելիության պահանջների չպահպանման դեպքերի համար սահմանվում է բացառություն և Օրենքում 2024 թվականի մայիսի 25-ից ուժի մեջ մտած կարգավորումները չեն տարածվում այն անձանց վրա, ովքեր մինչև օրենքն ուժի մեջ մտնելը հանրային պաշտոնը համատեղել են համայնքի ավագանու անդամի պաշտոնի հետ: Վերոնշյալի համատեքստում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ օրենսդիրը, տվյալ պարագայում, վերոնշյալ բացառության շրջանակներում թույլատրելի է համարում նշված պաշտոնների միաժամանակ զբաղեցնելու հնարավորությունը, ըստ էության, տեղի է ունեցել իրավիճակի փոփոխություն, որի հետևանքով վերացել է վարչական ակտի ընդունման անհրաժեշտությունը:

Վերոնշյալի առնչությամբ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում ընդգծել այն հանգամանքը, որ թեև Հանձնաժողովի դիրքորոշման համաձայն՝ վարույթի մասնակցի կողմից չեն պահպանվել Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ պաշտոնի անհամատեղելիության պահանջները, այնուամենայնիվ, սույն վարույթում քննարկված հանգամանքների շրջանակում վերացել է պետական հայեցողական պաշտոն զբաղեցնող անձի կողմից այլ՝ համայնքի ավագանու անհամատեղելի պաշտոն զբաղեցնելու խախտման կապակցությամբ համապատասխան եզրակացություն ընդունելու անհրաժեշտությունը:

Հաշվի առնելով վերոգրյալ հիմնավորումները և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ Հանձնաժողովը, գնահատելով գործում առկա ապացույցները, բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ Է

Կարճել Ազգային ժողովի նախագահի ռեֆերենտ Զինա Չալիկյանի նկատմամբ 2024 թվականի փետրվարի 23-ի թիվ 04/2024-Ա/Վ որոշմամբ անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման հիմքով հարուցված վարույթը:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ **ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ**